ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱԽԱՏԱՇՈՒԿԱՅՈՒՄ ԱՆՄՐՑՈՒՆԱԿ ԱՆՁԱՆՑ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱՐԿԻ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ (ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ՈՒՍՈՒՑՈՒՄ, ԳՈՐԾԱՐԱՐ ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ԴՐԱՆՑ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՒՂԵԿՑՈՒՄ) ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
«06» ԱՊՐԻԼԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԿՆՔՎԱԾ
N «ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-19/18»
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «28» « Հունվարի » **2020թ.**

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Ստեփան Մաչյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Գործընկերություն և ուսուցում» ՀԿ-ն, ի դեմս տնօրեն Ա. Տոռոզյանի, մյուս կողմից, ղեկավարվելով ՀՀ կառավարության 31.10.2019թ. N 1517-Ն որոշմամբ և հիմք ընդունելով «06» ապրիլի 2019 թ. N «ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-19/18» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 կետը, հաշվի առնելով, որ առկա են Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ, կնքեցին սույն Համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պայմանագրի 4.1. կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 5780000 (հինգ միլիոն յոթ հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ: 2019թ. համար սույն պայմանագրի շրջանակներում մատուցվող ծառայությունների գինը կազմում է 4032768 (չորս միլիոն երեսուներկու հազար յոթ հարյուր վաթսունութ) ՀՀ դրամ:

Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 5780000 (հինգ միլիոն յոթ հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ: 2020թ. համար սույն պայմանագրի շրջանակներում մատուցվող ծառայությունների գինը կազմում է 1747232 (մեկ միլիոն յոթ հարյուր քառասունյոթ հազար երկու հարյուր երեսուներկու) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը»:

1.2 Պայմանագրի Հավելված 2-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Հավելվածի:

2. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում և Կողմերի համար պարտադիր է դառնում կնքման պահից:

2.2 Կողմերի միջև նախկինում ձեռք բերված բոլոր գրավոր համաձայնությունները գործում են այնքանով, որքանով չեն հակասում սույն Համաձայնագրի դրույթներին:

3. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

3.1 Կողմերը պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.3 Սույն Համաձայնագիրը և Համաձայնագրի Հավելվածները կազմված են յոթ էջից: Համաձայնագիրը կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.4 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

ԳՆՈՐԴ	**ՎԱՃԱՌՈՂ**
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն,	«Գործընկերություն և ուսուցում» ՀԿ
ք. Երևան, Կառավարական տուն 3,	ք. Գորիս, Նարեկացի 13/14
ՀՎՀՀ՝ 02536701	ՀՎՀՀ՝ 09412936
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ՎՏԲ-Հայաստան բանկ ՓԲԸ
Հ/Հ՝ 900011024990	Հ/Հ 16014303581600
Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող	տնօրեն
Ս. Մաչյան	Ա. Տոռոզյան
---	---
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 2
« 06 » ապրիլի 2019 թ. կնքված
N ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-19/18 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայության																									
			դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
80531100/41	Ձեռնարկատիրական գործունեության մեկնարկի և իրականացման համար անհրաժեշտ աջակցության ծառայությունների մատուցում					1822920	1822920	3645840	3645840	3645840	4032768	4032768	4032768	4032768			250000	5000000	750000	1000000	1250000	1500000	1747232	1747232	1747232	1747232	1747232

ման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

ԳՆՈՐԴ

ՀՀ աշխատանքի և սոցիալական
հարցերի նախարարություն,
ք. Երևան, Կառավարական տուն 3,
ՀՎՀՀ՝ 02536701
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ՝ 900011024990
Գլխավոր քարտուղարի
պարտականությունները կատարող
Ա. Մաչյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Գործընկերություն և ուսուցում» ՀԿ
ք. Գորիս, Նարեկացի 13/14
ՀՎՀՀ՝ 09412936
ՎՏԲ-Հայաստան բանկ ՓԲԸ
Հ/Հ 16014303581600
տնօրեն
Ա. Տոռոզյան

/ստորագրություն/
Կ.Տ